

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ
ՄԻ ՄԻԱԼ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԱՌԹԻՎ

ՀՐ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հովհաննիսյանը իր «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատորյա աշխատության մեջ բազմաթիվ էջեր է նվիրել Ռ. Պատկանյանին, անդրադարձել գրողի աշխարհայացքի, դրական ուղղության, լեզվի ու լեզվական հայացքների գնահատությանը: Չվերցնելով մեզ վրա անվանի բանասերի շատ կողմերով ուշադրավ աշխատության ընդհանուր գնահատության դժվարին խնդիրը, մենք ցանկանում ենք անդրադառնալ միայն մի կարևոր հարցի՝ Ռ. Պատկանյանի գնահատության հարցին:

Գրողների կյանքում լինում են սխալներ, սայթաքումներ, նախապաշարմունքներ, լինում են ստեղծագործական վրիպումներ: Բայց, թվում է, թե ոչ մի բարեխիղճ բանասեր չի փորձի բնութագրել հեղինակին, ելակետ ունենալով յոկ նրա սայթաքումներն ու վրիպումները: Ուսումնասիրողի խնդիրն է բացահայտել գրողի ստեղծագործության ընդհանուր տենդենցը, ոգին, հասարակական այրող այն խնդիրները, որոնք նա ժամանակին արժարժել է, ստեղծագործական այն նվաճումները, որոնցով նա հարստացրել է մայրենի գրականությունը: Եվ այդ ո՞ր մեծ գրողն է, որ անկախ ժամանակաշրջանով պայմանավորված իր որոշ սխալներից ու սահմանափակություններից, հանդես է եկել իրրե առաջավոր պաշտպանների՝ գրողակուկի և չի ստեղծել ժամանակի առաջադրած հարցերին պատասխան տվող մեծարվեստ երկեր:

Հայտնի է, թե ինչպես 1935 թ. լույս տեսած «Նալբանդյանի անտիպ երկերի» կոմենտարներում Ա. Հովհաննիսյանը Պատկանյանին «մշակման» է ենթարկել նիհիլիստական դիրքերից՝ խեղաթյուրելով մեծ գրողի գիմանկարը:

Կարելի էր կարծել, որ անցած ավելի քան քսանամյա ժամանակամիջոցը, պետք է որ անհետանք անցած չլինելին «Անտիպ երկերի» կոմենտարների հեղինակի համար:

«Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատությունը ցույց է տալիս, որ հեղինակի հայացքները՝ գոնե մեզ հետաքրքրող խնդրի առնչությամբ, էական եվոլյուցիա չեն ապրել:

Ծիշոտ է, առանձին ղեպքերում, ընդհանուր հայտարարությունների կարգով Ա. Հովհաննիսյանը գրողի մասին ասում է հավուր պատշաճի դրական խոսքեր, սակայն դրանք ավելի չեն, քան սև ու մուգլ ֆոնի վրա երևացող առանձին լուսավոր բծեր:

Նախ նկատենք, որ Պատկանյանի արժեքավորման հարցում բանասերը ընտրել է սխալ ելակետ: Ա. Հովհաննիսյանը բանաստեղծի արժեքավորումը կատարում է հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանի հետ՝ մեծ մասամբ

անհարկի նրան համեմատելու և կամ հակադրելու սկզբունքով: Նա առավելապես հակված է շեշտելու ոչ թե այն, թե ինչ է Պատկանյանը, այլ այն, թե ինչ է Պատկանյանը: Այստեղ արժեք մտարերել էնինի հետևյալ խորիմաստ խոսքերը: Լենինը գրում է. «Պատմական ծառայությունների մասին դատում են ոչ թե նրանով, թե ինչ չեն արել պատմական գործիչները ժամանակակից պահանջների համեմատությամբ, այլ նրանով, թե նրանք ինչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ»¹:

Դժբախտաբար այս ելակետով չէ, որ առաջնորդվում է Հովհաննիսյանը Պատկանյանի արժեքավորման հարցում:

Դիմենք փաստերին:

Կիրքն ու վիրավորական տոներ իրենց ղգալ են տալիս մեծ զրոյի մասին առված առաջին իսկ պարբերության մեջ: «Հետագայում, — գրում է Հովհաննիսյանը, — Ռ. Պատկանյանը ինքնագոհությամբ և ոչ առանց սնապարծ շարամտության կարծես ուղում էր նշած լինել իր և Նալբանդյանի ներհակության սոցիալական խոր արմատները, երբ տեսնում էր. «Նալբանդյանը հասարակ, շոնիկ ընտանիքից էր, իսկ մեր ընտանիքը Նախիջևանի ինտելիգենտ ընտանիքներից էր. իմ մեծ հայրը վարժապետ էր. հայրս՝ և վարժապետ, և քահանա»²:

Բանասերի տենդենցը մատնում է ոչ միայն նրա խոսելու ոչ վայելուչ տոներ, այլև այն, որ նա, սկզբից ևեթ, պոետի նկատմամբ հակակրանքի տրամադրություն ստեղծելու միտումով, Պատկանյանի կողմից երբեք և ոչ մի տեղ գրի չառնված խոսքերը ընթերցողին համեցնում է իբրև նրա խոսքեր. խոխտելով դրական տարրական էթիկան: Իրականում, բանաստեղծին վերադրված տողերը Հովհաննիսյանը քաղում է Պատկանյանին նվիրված այնպիսի հուշերից, որոնց օրվելովության մասին ժամանակակիցները չուրջ կասկած են հայտնել: Բանասերը չկամենալով, անշուշտ, թույլացնել ակնկալվող էֆեկտը, հարկ չի համարում ցույց տալ բերված քաղվածքի ստույգ աղբյուրը:

Մի՞թե կարելի է այդպիսի խախտում «փաստի» վրա տեսություն կառույցել՝ հայտարարելով ապացուցված Պատկանյանի և Նալբանդյանի «ներհակության սոցիալական խոր արմատները»:

Հայտնի է, որ Հովհ. Ռումանյանը իրեն համարում էր շառավիղ Վարդան Մամիկոնյանի տոհմի, իսկ Պոռչյանը XII դարի նշանավոր Պոռչ իշխանի մեջ տեսնում էր իր հեռավոր նախորդին: Աղայանը բարեհոգաբար ծիծաղում էր իր ընկերների այդ թույլության վրա: Հետագայից կլենի իմաստը, եթե Ա. Հովհաննիսյանը անդրադառնալու լիներ այդ փաստերին, ինչպե՞ս պիտի որակեր գրանք և սոցիալական ներհակության ինչպիսի՞ տատիճան պիտի սահմաներ Ղ.Աղայանի և նրա հոգեհարազատ բարեկամների միջև:

Վստջ գնանք ստիպին:

1856 թ. սկզբներին Պատկանյանը Նալբանդյանի միջոցով Պետերբուրգից Մոսկվա է ուղարկում մի ծրար, որը պիտի հանձնվեր «Գամառ Քաթիպա» գրական ընկերության անդամ Գևորգ Քանանյանին: Ծրարը պարունակում էր Իսկենդերի (Գեբեղենի) հայտնի նամակը Ալեքսանդր II թագավորին, բրի մեջ շոշափվում էր ճորտերի ազատության խնդիրը: Դա ժամանակի հայտնի քաղաքական փաստաթղթերից էր, տարածվում էր անլեզալ կերպով: Նամակն

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 229:

² Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանի և նրա ժամանակը, հատ. 1, էջ 18:

ուղարկելուց հետո, Պատկանյանին սկսում է անհանգստացնել այն միտքը, որ Նալբանդյանին վստահել է նման պատասխանատու և վտանգավոր մի հանձնարարություն: Նա անմիջապես Քանանյանին գրում և զդուշացնում է՝ շուտով «վտանգավոր ծրարը» վերցնել Նալբանդյանից և իրեն միամտացնել, «Թե չէ, նորա ձեռքն այն չար գործիք է...»:

Ա. Հովհաննիսյանը Պատկանյանի այս տողերը առաջ բերելուց հետո, բերում է նաև Գերցենի հիշյալ նամակի մի քանի տողը: «Խնքյան հասկանալի է, — իմ զինադրոշմը Ձերը չէ, — ես տնուղղա սոցիալիստ եմ, գուք ինքնակալ իմպերատոր: Բայց ձեր և իմ դրոշակի միջև կարող է լինել ընդհանուր մի բան... սեր դեպի ժողովուրդը: Տվեք հողը գյուղացիներին, դա առանց այն էլ նրանց է պատկանում: Կվացեք Ռուսաստանի երեսից ճորտատիրական վիճակի խայտառակ բիծը, բուժեցեք մեր եղբայրների մեջքի վրա եղած կապույտ սպիները — դեպի մարդը եղած ատելության այդ զարհուրելի հետքերը: Ազատություն տվեք ուս խոսքին... Առաջին նվազ մեզ այդ էլ բավական է»:

Թվում է, թե օբյեկտիվ հետադոտողին, վերը շարադրած փաստի մեջ, ամենից առաջ պետք է հետաքրքրեր Գերցենի նամակի հանդեպ Պատկանյանի այդքան ակտիվ վերաբերմունքի մոմենտը: Բանասերը պարտավոր էր ընդգծել, որ Պատկանյանը հետևում էր արտասահմանում տպագրվող և Ռուսաստանում անլեզալ տարածվող ուս ազատ մամուլին և որ նա ոչ միայն հետև չէր կանգնած հեղափոխական ճգնաժամ ապրող Ռուսաստանի քաղաքական սուր խնդիրներից, այլև դրոշակի դրական մերձեցում ուներ հեղափոխական-դեմոկրատների հետապնդած հասարակական-քաղաքական նպատակների հանդեպ: Բայց եթե բանասերը խնդրի քննությունը տաներ այդ ուղիով, որը կլիներ ճշմարտության և արդարամտության ուղին, հասած չէր լինի իր հետապնդած նպատակին: Նա խնդիրը քննում է Նալբանդյան — Պատկանյան փոխհարաբերության առնչությամբ: Այդ ևս ոչինչ, եթե միայն նա այդ աներ առանց կանխակալ մոտեցման: Այս՝, այդ փաստը խոսում է այն մասին, որ Պատկանյանը երկյուղ է ունեցել, թե Նալբանդյանը կարող է անզգուշ վարվել քաղաքական տեսակետից վտանգավոր փաստաթղթի հետ (ընկերների շրջանում կարողալ — մասսայականացնել) և դրանով վտանգել իրեն՝ Պատկանյանին: Այսպիսի եղրակացությունը, սակայն, չէր կարող գոհացնել Ա. Հովհաննիսյանին: Ապացույցած լինելու համար իր այն թեզը, որ Նալբանդյանի և Պատկանյանի ներհակությունը արդեն իսկ հիսնական թվականների կեսերին քաղաքական պատվանդան ուներ, նա պետք է ջանար ապացուցել երկու գրողների հակադիր դիրքավորումը դեպի Գերցենի նամակը: Եվ նա փորձում է այդ անել: Ա. Հովհաննիսյանը իր կողմից ընդգծելով Գերցենի «Ազատություն տվե՛ք ուս խոսքին...» բառերը այսպիսի՝ միանգամայն անակնկալ հայտնագործություն և կատարում. «Պատկանյանին սարսափ էր ազդել ամենից շատ երեխ հենց նամակի մեր ընդգծած տողերը: Նա մտահոգված էր, թե Գերցենի ազատախոսությունը կարող էր վարակի օջախ դառնալ «Հյուսիսսփայլի» համար»¹:

Բանասերը այս տողերը գրելիս հաշվի չի առել, թե Գերցենի ազատախոսությունը, որքան էլ այն վարակիչ լիներ, ի՞նչ կերպ կարող էր «վարակի օջախ» դառնալ մի օրգանի համար, որը աակավին գոյություն չուներ: Ստիպված ենք նալբանդյանագետին հիշեցնել, որ «Հյուսիսսփայլը» հրատարակվել

¹ Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., հատ. 2, էջ 188:

Հիսկ Գ հիշատակված դեպքերից մոտ երկու տարի հետո միայն, Ի դեպ, բանասերը թույլ է տալիս մեկ ուրիշ անճշտություն ևս, երբ ասում է, թե Իսկենդերի նամակը Ալեքսանդր II ցարին տպագրվել է «КОЛОКОЛ»-ում: Այդ ժամանակ դեռևս «КОЛОКОЛ»-ը չէր հիմնադրված: Նամակը լույս է տեսել «Полярная звезда»-ի 1855 թ. առաջին գրքում:

Սակայն սրանք պատահական թյուրիմացություններ են. դառնանք բուն ինդրին:

Եթե Պատկանյանի համար սարսափելի լիներ Գերցենի ազատ խոսքի պահանջը թագավորից, ինչո՞ւ պիտի նա այդպիսի հետաքրքրություն հանդես բերեր դեպի ռուս ազատախոս օրգանը՝ «Полярная звезда»-ն, որը հենց ազատախոսության պատճառով լույս էր տեսնում ոչ Ռուսաստանում. և հետո, ինչո՞ւ պետք է այդ օրգանի էջերում նա որոներ գտներ Գերցենի այդ համարձակ քաղաքական ելույթներից մեկն ու այնուհետև էլ արտագրեր—ուղարկեր Մոսկվայի իր ընկերոջը: Շատ բնական տրամաբանությամբ առաջ եկող այս ինչուների մասին բանասերը չի մտահոգվում, որովհետև դրանց պատասխանը կնշանակեր հերքումն իր իսկ առաջադրած կեղծ թեզիսի:

Պնդել, որ Պատկանյանը կարող էր սարսափել Ռուսաստանում խոսքի ազատությունից, այդ նշանակում է աղաղակող հակասության մեջ մտնել ճշմարտության հետ, չիմանալ և կամ չուզենալ գիտենալ հակառակը պնդող տասնյակ և հարյուրավոր փաստեր, այդ նշանակում է առհասարակ բավարար պատկերացում չունենալ խոսքի ազատության բացակայության հետևանքով շարաշար տուժած, գրաքննական ամենադաժան ավերածությունների ենթարկված Պատկանյանի ստեղծագործության մասին:

Այդ «ազատ խոսքից վախեցող» Պատկանյանը չէր, որ ստիպված էր մեկ տասնյակից ավելի դիսկան կեղծանուններով հանգես գալ, որպեսզի մի կերպ կարողանար մոլորեցնել ցարական գրաքննությանը: Այդ նա՞ չէր, որ մեծագույն զայրույթով նշավակում էր ազատ խոսքի վրա բռնացող «անգութ ուղեղներին» (ցենզորին), որը դաժան խստությամբ արգելում էր բանաստեղծին իր ժողովրդի «աղետալի բախտը սղալ»... Ազատ խոսքի «հակառակորդ» Պատկանյանը չէ՞ր, որ գրում էր. «Արդեն վաղուց է ցենզուրան իմ գրչի վրա յուր արգելման կնիքը դրել, եթե այժմ Գամառ Քաթիպան կամ Սյուլուկը գարնան տերևների դալարությունը ևս դովեն, նա պիտի տեսնի, կամ ջանա տեսնելու տերության ընդդեմ մի ձգտումն»: Ցարական գրաքննության անտանելի պայմանների դեմ Պատկանյանի ելույթները հաճախ ցասկոտ ընդվզումի բնույթ էին ստանում: Բնորոշ են բանաստեղծի հետևյալ տողերը. «Ու՛ր ենք մենք կենում, ե՞րբ ենք մենք կենում, մեր թագավորը խոմ Иван Грозный-ն չէ՞... Դիցուք թե, վերջապես ես գրված եմ ի շարս այն մարդոց (թեև այդ հավանական չէ, վասնզի այդպիսի վեհ պատվի ես բնավ արժան չեմ), որոնց գրվածքը տերության որևէ հաշվով հրատարակման անհարմար է դատված, ինչպես զորօրինակ Սալտիկով Շչեդրին, Հերցեն, Երեմյե Օստրովսկի և այլն: Թեև շատ ցավալի է այսպիսի վիճակը, բայց նորա մեջ այն մխիթարությունը կա, որ այդպիսի անձանց վրա չարախոսել ևս ընդամին արգելված է լինում սովորաբար, բայց ես տարաբախտաբար այդ մխիթարությունն ևս զրկված եմ՝ շնորհոք Թիֆլիզի ցենզորին: Ինձ ամեն սրիկա լիաբերան հիշոցում է, իսկ ես գրիչս ձեռք առնելու իրավունք չունեմ»:

Տեղի սղությունը մեզ հարկադրում է չծավալվել, սակայն, չենք կարող չնշել, որ իբրև առաջին իսկ երկերով Պատկանյանը դրսևորեց իրեն իրեն հասարակական ակտիվ խառնվածքի տեր քաղաքացի-բանաստեղծ, իսկ 1856 թ. նեկրասովից փոխադրած «Երկու բանաստեղծի» մեջ, նա ձևակերպեց իր գեղագիտական հայացքները ընդգծելով՝ ամենից առաջ զրուր ֆաղաֆաղի է սկզբունքը: Ավելի ուշ, 70—80-ական թվականներին, անդրադառնալով գրողի դերի իր ըմբռնմանը, նա գրողին անվանում էր մառտիկ, իսկ դրական ասպարեզը պայքարի արենա: Այդ ժամանակ էր, որ նա վերնախավերի դեմ անզուսպ ատելություն ցուցաբերելով՝ գրական խոսքը բնութագրում էր, որպես «խամչի, խստորմիշ արած տամդա, позорный столб, կախաղան, эшафот, гильотина... միլիոնչիք мироед-ներու, самодур-ներու, монополист-ներու, эксплуататор-ներու համար»: Սկզբունքային ալի գիրքերից են դրված հեղինակի արձակի լավագույն նմուշները՝ «Չախուն», «Փորսուխին ավազը», «Նոր տուն, հին տունը», «Պաց աղապար», «Քալական մեռելները», «Նորթլախը», «Նոր Նախիջևանի քնարը» ևրդիծական բանաստեղծությունների շարքը և տասնյակ ուրիշները, որոնց մասին հիշատակություն տնգամ չկա Հովհաննիսյանի գրքում:

Ա. Հովհաննիսյանը հարցերը լուծում է շատ հեշտ, քանի որ նրան զբաղեցնում է ոչ թե փաստերից բխող ճշմարտությունը, այլ այն սխեման, որ նախագծել է ինքն իր համար: Բայց որ գլխավորն է, նա հակված է մոռանալու, որ քննության օրյեկտը գրող է, մեծ ստեղծագործող: Բանասերը միշտ հակված է անտեսելու գրողի լավագույն երկերը, երկեր, որոնք որոշող նշանակություն ունեն ոչ միայն իրեն՝ հեղինակի համար, այլև տվյալ ժամանակաշրջանի ու հետագայի ամբողջ հայ դրականության համար և, ընդհանրապես, զարմանալի ջանասիրությամբ նա ձգտում է որոնել, գտնել մի թույլ ու ոչ բնորոշ գործ, մի քաղվածք նամակից, մի շտուգված հուշ, որոնք քմահաճ մեկնաբանության ազատ հնարավորություն կարող են ընձեռել իրեն: Բավական է ասել, որ 50—60-ական թվականների Պատկանյանի բնութագրության միջոցին Ա. Հովհաննիսյանի ուշադրությունից վրիպում են, օրինակ, «Աղեն տա՛նն է», «Գանդատ Բաղդեն», «Երկու քույր», «Արարսի արաատուքը», «Երկու բանաստեղծ», «Քյոո օղյու», «Անվնաս մարդը», «Բոնի պսակ», «Մայրաքաղաքում կրթված հայ աղջիկ» և այլն, և ալն: Ակամա հիշում ես առաջի այն հերոսին, որի ուշադրությունից վրիպում է... փիղը: Այդպես է վարվում գիտնական-պատմիչներ, որովհետև հիշյալ երկերի հեման վրա, նույնիսկ ամենաընդգծված միտումնավորությամբ, անհնարին պիտի լինեք ապացուցել, որ 50—60-ական թվականների Պատկանյանի համար բնորոշը «հաշտվողականությունն է» գոյություն ունեցող իրականության հետ: Իր հետապնդած նպատակի տեսակետից, բանասերը ավելի բանական է համարում դիմել «Աստվածածնի պատկեր» բանաստեղծությանը, որին միակողմանի բացատրություն տալը առանձին զվարություն չի ներկայացնում, մանավանդ, երբ այն առնվում է կտրված պոետի այդ ժամանակաշրջանի ընդհանուր տրամադրությունից և ստեղծագործությունից:

Նույն սկզբունքով է առաջնորդվում Ա. Հովհաննիսյանը, երբ խստությամբ դատապարտում է երիտասարդ Պատկանյանի բացասական արտահայտությունները Ֆրանսիական հեղափոխության վերաբերյալ և սակայն լուծ է հասնում Պատկանյանի՝ նույն հեղափոխությանը և նրա գաղափարախոսներին նվիրած վեհ հիացմունքի խոսքերի մասին:

Դարձյալ նույն մեթոդն է կիրառում, երբ բանաստեղծի մի անտիպ նամակից քաղելով կես պարբերություն, բանասերը կամենում է ապացուցել նրա դրական վերաբերմունքը դեպի անգլիական կառավարության քաղաքականությունը և, սակայն, մոռացության է մատնում վաղուց հայտնի, հրապարակված որևէ մի շարք արձակ և չափածո երկերը, նրա ասույթները, որոնց մեջ նա ղեկավարին ատելությամբ նշավակում է թե՛ անգլիական և թե՛ եվրոպական մշուտ տերությունների գիշատիչ-հափշտակողական քաղաքականությունը: «Եվրոպայի խաղաղությունը չվրդովել, կասեն, Անգլիայի շահը կպահանջե, կսսեն... Մի՞թե անգլիական շահը կպահանջե,— գրում է Պատկանյանը,— որ երկրիս վրա չսված, չի տեսնված չարագործություններ կատարեն, որպեսզի միլիոնատեր լորդերը սնդուկների մեջ դիզեն հայի արջան և մահվան գնով ձեռք բերված ստերլինգները»:

Հետևյալ խոսքերով է Պատկանյանը բնութագրել Բեռլինի վեհաժողովը. «Ոչ մի ավազակախումբ այնպիսի լրբություններ իրա մեջ բաժանած չէր կապուտ-կողոպուտը, որքան այս նորատեսակ խաչակիրների ոհմակը բաժանում էր Եր-ցերեկով, փող ու թմբուկների ձայնով, յուր կատարած հափշտակությունը»:

* * *

Երբ խոսքը վերաբերում է Պատկանյանին, պատճարանը խուսափում է բնդհանուր բան տեսնել համակերպական և համառուական բուրժուազեմոկրատական հեղափոխական շարժումների և այն ազատագրական գաղափարների միջև, որ հնչեցնում էր բանաստեղծի մարտաշունչ քնարը: Ավելին, զբոսիկն կարելով էպոխայից և նույնիսկ հակադրելով էպոխայի ընդհանուր ուղղությունն ու տրամադրությունը, նա պնդում է, որ «Պատկանյանի քնարը հայտարարում է հեղինակի բացասական վերաբերմունքը դեպի համառուական և համակերպական ռևոլյուցիոն շարժումները»¹: Այսպիսի կարծիքը Պատկանյանի նկատմամբ սխալ է ոչ միայն փաստական առումով, այլև իրրև տեսական հարցադրում: Խնդիրը այդ կերպ դնել, կնշանակի ազգային ազատագրական շարժումները չդիտել որպես ֆեոդալական բռնապետական կարգերի դեմ համազեմոկրատական պայքարի մի անբաժան մասը:

Ի՞նչ պրոցես էր ապրում հայ ժողովուրդը 50—60-ական թվականներին: Բուրժուական ֆորմացիան թևակոխելու պրոցեսը, մի պրոցես, որ մեզ մոտ, մեր ժողովրդի պատմական կյանքի առանձնահատկության հետևանքով, ընթանում էր օտար բռնատիրությունների դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ուղիով: Այս իմաստով էլ չի կարելի կապ շտեմնել Պատկանյանի ժողովրդական-ազատագրական պայքարի պոեզիայի, մասնավորապես նրա հակացարական ելույթների և 60-ական թվականների ռուսական գյուղացիական շարժումների միջև, ինչպես փորձում է այդ անել Ա. Հովհաննիսյանը, ասելով. «Գլխավոր լինելով ցարական Ռուսաստանից, նա անգիտացավ ռևոլյուցիոն Ռուսաստանը»²:

Հարցը այդ կերպ դնել, կնշանակի չխոստովանել ներքին դադափարական այն սերտ կապը, որ բնականաբար գոյություն ունեւր ցարիզմի դեմ ծառացած

¹ Ա. Հովհաննիսյան, Նշվ. աշխ., հատ. 2, էջ 141:

² Նույն աեղում, էջ 141:

երկու բանականների՝ ուսու հեղափոխական դյուղացիության և ճնշված աղգերի պայքարի միջև: Հայտնի է, որ ուսու 60-ականների հեղափոխական ծրագրերում առանձնահատուկ տեղ էր գրավում Ռուսաստանի և Թուրքիայի լծի տակ ճնշվել ժողովուրդների, այդ թվում նաև անդրկովկասյան ժողովուրդների ազգային ազատագրության խնդիրը: Սասնավերապես այդ հարցին մեծ ուշադրություն էր նվիրում Գերցենի «КОЛОКОЛ»-ը: Սրանք հանրահայտ փաստեր են: Դրանց մասին մանրամասն խոսում է ինքը բանասերը: Հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանի ծրագրում ևս ճնշված ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի ազատագրության խնդիրը բացառիկ նշանակություն էր ստանում: Իր հերթին Պատկանյանը ոչ միայն չէր անդիտանում «ռեոլյուցիոն Ռուսաստանը», այլև, ինչպես նկատեցինք, ամենազրպյուն վերաբերմունքն էր հանդես բերում ստեղծված հեղափոխական իշադրության հանդեպ: Որքան էլ Ա. Հովհաննիսյանը փորձի հակառակ կողմից ներկայացնել Գերցենի վերը հիշատակված նամակի նկատմամբ Պատկանյանի վերաբերմունքի խնդիրը, այնուամենայնիվ այդ փաստը խոսում է հօգուտ մեր կարծիքի: Պատկանյանը նույնպիսի սուր հետաքրքրություն էր հանդես բերում նաև դեպի Բելինսկու երկերը: Նա ստեղծագործական մղում էր ստանում Նեկրասովի և Սալտիկով-Շչեդրինի երկերից: Պատահական էր արդյոք, որ 60-ական թվականների կեսերին հրապարակելով իր գրական մանիֆեստը, Պատկանյանը կողմնորոշվում էր դեպի դյուղացիական-հեղափոխական Ռուսաստանի երկու սիմվոլացած անունները՝ Ստեփան Ռազինը և Եմելյան Պուգաչովը, որոնց նա դարձնում էր իր համար ստեղծագործական որոնումների ուղեցույց: Ռուսաստանում 50—60-ական թվականներին ստեղծված ռեոլյուցիոն իրադրության որոշակի ազդեցությունը նկատելի է ոչ միայն հեղինակի այդ տասնամյակների ստեղծագործության վրա, այլև հետագայի այնպիսի բացահայտ հակամիապետական երկերի վրա, ինչպիսիք էին «Վայնա», «Ազուն կորոդ», «Փորսուխին Ավադը» արձակ գործերը: «Փեսաներ», «Հայ տղայոց ողբը», «Խնամակալի խրատները» (վերջինս անտիպ է) բանաստեղծությունները: Մասնավորապես «Վայնայի» և «Փեսաների» մեջ գրողը դաժան խստությամբ մերկացնում է միապետական ճորտատիրական Ռուսաստանի ներքին փտածությունը, կնուտի և ռոզգու զազրելի իրականությունը և անձամբ Նիկոլայ I կայսրին ու նրա մերձավոր պալատականներին:

Որքան էլ Ա. Հովհաննիսյանը փորձի Պատկանյանին ներկայացնել մեկուսացած 50—60-ական թվականների հայ և ուսու դեմոկրատ գործիչներից, որքան էլ նա ձգտի նվաստացնել մեծ գրողի գերը այդ գործիչների շարքում, այնուամենայնիվ փաստ է, որ պաշտոնական Ռուսաստանի ներկայացուցիչները խորր կապեր էին տեսնում նրա քարոզած ազատագրական գաղափարների և գաղութային ճնշման դեմ ուղղված այն իրադարձությունների միջև, որոնցից ցարիզմը ոչ պակաս երկյուղ էր կրում: Իդուր է Ա. Հովհաննիսյանը զարմանում, որ Կատկովի «Московские ведомости» թերթը Նալբանդյան և Պատկանյան անունները «մի հանգով էր արտաբերում»: Կատկովի օրգանը Պատկանյանին ոչ անհիմն կերպով էր մեղադրում կովկասահայ երիտասարդության շրջանում հակամիապետական ազգային-ազատագրական տրամադրություններ խմորելու գործում՝ նկատի ունենալով գրողի «Հայկ և Լեոնին մոռանանք» բանաստեղծությունը: Մանավանդ, որ այդ բանաստեղծությունը 1862 թվականին լույս էր տեսել Թիֆլիսում հրատարակվող «Կոունկ» ամսագրում:

Ա. Հովհաննիսյանը, ըստ երևույթին, չի նկատել, որ Կատկովի օրդանում Պատկանյան և Նալբանդյան անունները մի հանգով են արտաբերվել ոչ միայն «Հայկ և Լևոնին մոռանանք» բանաստեղծության, այլև «Արաքսի արտասուքի» առնչությամբ: Նույն «Московские ведомости» լրագրում տպագրված Закавказье-ի նամակ-հոդվածում, այն բանից հետո, երբ տալանապով խոսվում է Գերցենի և Մաձինիի հետ հեղափոխական կապերի մեջ մտած, «Հայաստանը վերականգնել» ցանկացող Նալբանդյանի մասին, այնուհետև ասվում է. «Ինչպես բացատրել, որ Մոսկվայում հրատարակվել է, կարծեմ անցյալ տարում, հայերեն ինչ-որ մի զրբույկ, որտեղ հեղինակը բանաստեղծական արտահայտություններով ողբում է Հայաստանի ինքնուրույնության կորուստը»¹: Գրքույկը, որի մասին խոսվում է, 1864 թ. Մոսկվայում տպագրված Պատկանյանի բանաստեղծությունների ժողովածուն էր, իսկ բանաստեղծությունը, ինչպես պարզ կարելի է նկատել, «Արաքսի արտասուք»: Ուշագրավ է, որ Закавказье-ը հայկական կյանքից առած այս փաստերը դիտում է որպես ցարիզմի դեմ Լեւոնյանում, Ուկրաինայում և այլուր ծավալված ազատագրական ընդվզումների շղթայի մի օղակը:

Որ իրոք Ռուսաստանի «ներքին ազատության» և ցարիզմի կողմից ճնշված ժողովուրդների ազատագրության հարցերը անշատ հարցեր չէին, այլ մի ընդհանուր սլոյգարի տարբեր ձևկատամասեր՝ իրար հետ սերտորեն զուգորդված և միմյանցով պայմանավորված, դրանում կարելի է համոզվել՝ կարդալով Նալբանդյանի հետևյալ տողերը.

«Ռուսիո մեջ խմորված ազատությունը համարձակ կարելի է մարդկային ազատություն անվանել... քանզի ոչ միայն ինքը ուսուր կուզե իր ազատությունը, այլ՝ կբարոզե թե Լեհաստանը, Ֆինլանդիան, Փոքր Ռուսիա (15 միլիոն ժողովուրդ), Կովկաս, Վրաստան և Հայաստան պետք է որ ազատ և անկախ ըլլան Մեծ Ռուսիայեն, որպեսզի ինքը 43 միլիոն զուտ ուսական ազգը ստուգապես ազատվի, ամեն ստրկության և ամեն բռնաբարության սկզբունք մերժելով և իր բարոյական և նյութական ուժերը և զորությունը միմիայն իր մեջ ամփոփելով, որպեսզի երջանկություն ճաշակե, հազարամյա գերությունեն ետքը և հառաջանա քաղաքակրթության մեջ: Ռուսիո ազատությունը, ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ, մեծ խորհուրդ ունի...»²:

Անտարակույս է, որ «մարդկության ազատության» մեծ խորհրդի ըմբռնումով էին թելադրվում նաև Պատկանյանի ըմբոստ ծառացումները ցարիզմի՝ իբրև գաղութային մեծ տերության դեմ: Բնորոշ են հետևյալ տողերը. «Ի՞նչ միտք ունի, — դրում է Պատկանյանը խոսքը ուղղելով ցարիզմին, — զենքիդ դորությունը միշտ և միշտ նվաճել քո զրացի ազգերին և կույ տալ. մի՞թե չդուռես դու, որ շատ ուտողի ոտամոքսը միշտ հիվանդ է»:

Պատկերավոր ասված այս լակոնիկ խոսքերով, Պատկանյանը ոչ թե սոսկ տրձանագրում էր ցարիզմի՝ գաղութակալ տերություն հանդիսանալու փաստը, այլև դրսևորում իր ժխտական դիրքը այդ փաստի հանդեպ, արտահայտում իր խորը համակրանքը ճնշված ժողովուրդների նկատմամբ, ինչպես և իր բուռն դանդաղությունը՝ այդ ժողովուրդներին ցարիզմի բռնությունից և ստրկությունից մի օր ազատ տեսնելու:

¹ Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., հատ. 2, էջ 15:

² Ս. Նալբանդյան, երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 61:

Թեև Ա. Հովհաննիսյանը փաստերի ճշման տակ հայտարարում է Պատկանյանի՝ ցարիզմից դիմադարձ լինելու մասին, սակայն դա չի խանգարում, որ նա միաժամանակ փաստեր որոնի հակառակը պնդելու համար, որպեսզի դրանով իսկ հիմքեր ստեղծի բանաստեղծի և էպոխայի բուրժուա-դեմոկրատական պրոգրեսիվ զաղափարախոսների միջև պատանեշ կանգնեցնելու, որը և նա, ինչպես տեսանք, փորձում է կատարել¹:

Բանն այն է, որ Ա. Հովհաննիսյանը ցարիզմի նկատմամբ Պատկանյանի դիրքավորման հարցը քննում է չափազանց ուղղադիժ ներպոլ՝ անտեսելով խնդրի երկակի կողմը: Պատմաբանը մոռանում է, որ Կովկասահայաստանում և Ռուսաստանում հայերի ճնշված վիճակը չէր հերքում այն իրողությունը, որ այնուամենայնիվ՝ «Ռուսաստանի մեջ հայոց վիճակը եղել է բազմապատիկ առավելություն լավ», քան մյուս բոլոր երկրներում, ինչպես ասում էր Պատկանյանը: Հակադրությունը առավել ցայտուն էր դառնում, երբ ռուսահայերի վիճակը համեմատության մեջ էր դրվում Թուրքիայի բարբարոսական լծի տակ տառապող հայերի վիճակի հետ: Արանով էլ պայմանավորվում էր Պատկանյանի, և ոչ միայն Պատկանյանի, կողմից արևմտահայության ազատագրության հարցը իբրև առաջնահերթ խնդիր դիտելու անհրաժեշտությունը: Ըստ երևիության այստեղից էլ հենց առաջանում է խնդրամագնությունը: Բայց Հովհաննիսյանը պետք է իմանա, որ խնդրին դրեթե նույն կերպ էր նայում նաև Նալբանդյանը: Պատահական չէր, որ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության հիմնական հարցերից մեկը հրապարակախոսը դարձնում էր արևմտահայության վիճակի հարցը, ինչպես նաև պատահական չէր, որ Պոլսի ռուսական դեսպանին ուղղած դրություն մեջ Նալբանդյանը Ռուսաստանի օժանդակությունն էր խնդրում արևմտահայերի ազատության համար:

Արևմտահայության ազատության հարցը առաջնահերթ խնդիր դիտելու հանդամանքը համարել պատմական սխալ և կամ Պատկանյանի և ուրիշների «պահպանողականություն» արգասիք, նշանակում է հեռանալ պատմականությունից, չըմբռնել հայ ժողովրդի այն ժամանակաշրջանի կենսական շահերը:

¹ Ահա մեկը այդ «փաստերից»: Եղյանին հասցեագրած Ռ. Պատկանյանի 1878 թ. 21 նոյեմբերի նամակից իմանում ենք, որ Ռուսաստանի սյրիայի գաղտնիներում խրատումներ տեղի ունենալու պատճառով, Ռոստոմի նահանգապետը մերժել է բանաստեղծի դիմումը՝ Նոր-Նոխիջեանում ապարան հիմնելու մասին: Այս կապակցությամբ, խնդրելով եղյանի միջնորդությունը կառավարական բարձրագույն օրգանների առաջ, Պատկանյանը խորհուրդ է տալիս նրան, համապատասխան ինստանցիայում ասել, որ հայերը երբևէ տերության գործերի մեջ խառն եղած չեն: Առաջ բերված խոսքերը կարելով բուն կոնտեքստից, բռնության մասնելով, թե ինչ ասելով և նպատակով են ասված, բանասերը դրանք բերում է իբրև տպացույց այն բանի, որ Պատկանյանը պատսիվ դիմագրություն է ցույց տալիս ցարիզմին և անապրերություն ցուցաբերում «օտար» համարված ռուս ժողովրդի քաղաքական բախտի նկատմամբ» (Երկրորդ հատոր, էջ 110):

Անելով այս եզրակացությունը, Ա. Հովհաննիսյանը հաշվի չի առնում, թե ցարական բյուրոկրատական ապարատում բարձր գիշեր գրավող եղյանին Պատկանյանը ուրիշ ինչ կարող էր գրել, ապարան հիմնելու թույլտվություն ստանալու համար, եթե ոչ իշխանությունն հանդեպ հայ ժողովրդի լույսությունը հավաստող այդ առդերը:

Այս մենք բերում ենք ոչ իբրև եզակի օրինակ, այլ տիպական օրինակ՝ Ա. Հովհաննիսյանի կողմից փաստերի հետ վարվելու եղանակի:

Հետաքրքրական է նաև Պատկանյանի երկու բանաստեղծության առիթով՝ Նալբանդյանի դրած պարողիաների հարցը:

Աշոտ Հովհաննիսյանն իր աշխատության մեջ առանձին կրթով առաջ է բաշում այդ հարցը՝ «դրական հակամարտ» մեծագործող անվան տակ: Նալբանդյանի պարողիաներից հատկապես «Հիշենք» նա դարձնում է իր համար ելակետ Պատկանյան քաղաքացու, քաղաքական-հասարակական գործչի, ինչպես նաև բանաստեղծի գրական ուղղության և ողջ ստեղծագործության ժրխտական գնահատության համար:

Տեսնենք, թե որքանով է իրավացի բանասերը:

Հիսնական թվականների վերջերին և վաթսուականների սկզբներին նոր թափ ստացան Օսմանյան կայսրության դեմ քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում նաև հայերի, ազատագրական շարժումները: Այդ շարժումները, մասնավորապես ղեկավարողների ապստամբությունը, եկան կործանիչ հարված հասցրնելու հայ ռեակցիոն շրջաններում քարոզվող այն կարծիքին, որի համաձայն ժողովրդի վերածնության հույսերը լուր ցնորք էին, զուրկ իրական հողից: Այդ շարժումները հակառակ ռեակցիա էին առաջացնում ազատագրական պայքարի գաղափարախոս երդիչների մոտ: Հուսագրիչ այդ դեպքերի խոր արձագանքը հանդիսացավ Պատկանյանի «Հայ պատանին երգում է» ծրագրային բանաստեղծությունը:

Այդ բանաստեղծությամբ Պատկանյանը անհաշտ պայքար հայտարարեց հետադիմականներին, հռչակեց մանուկ Հայաստանի գաղափարը իբրև ռեալ, հուսալի գաղափար, այդ գաղափարի իրագործման հեռանկարը կապելով աշխատավորության հետ, այն խավերի հետ, որոնց մի ձևովում բահ էր, մյուսում՝ հրացանը, աշխատանքի ու պայքարի երկու խորհրդանշանը: Հայ պատանին՝ բանաստեղծի աշխատավոր հերոսը, սահմանադատվում էր ոսկու տերերից, հարուստներից, ոչ միայն նրանց հետ չէր կապում ժողովրդի պայքարին օժանդակելու ռեալ հույսեր, այլև չէր մոռանում պայքարի ներքին ճակատը ընդդեմ ուրջունների՝ ներքին կեղեքիչներին:

Ազատագրական պայքարի այդ ծրագիրն ու տախտիկան ճիշտ կերպով բացահայտում էր ժողովրդի թե՛ արտաքին և թե՛ ներքին սոցիալական կյանքի ու պայքարի խնդիրները:

Այս բանաստեղծության յուրովի արձագանքն էր Նալբանդյանի «Հիշենք» պարողիան:

Պատկանյանի ոտանավորը սկսվում էր այսպիսի ուշագրավ տողերով.

Հայկ և Լեոնին մոռանանք, եղբայրք,
Թափ տանք մեղանից փոշին հնության,
Վերածնենք մեր մեջ նոր կյանք ու նոր բարք,
Կեցցե շատ օրեր մանուկ Հայաստան:

Նալբանդյանը այս քառյակին հակադրում էր հետևյալ տողերը.

Հայկ և Լեոնին հիշենք միշտ, եղբայրք,
Թափենք նոցանից հնության փոշին.
Նորանց հիշելով արդյոք մի նոր կյանք
Առնու Հայաստան—նոցա խեղճ այրին:

Նկատենք, որ առերևույթ իրար հակադրվող այս տողերը, ըստ էության նույն բանն են ասում: Թե Պատկանյանի «մոռանալով» և թե Նալբանդյանի՝ «հիշելով» խորհուրդը միևնույնն էր՝ ազդի վերածնությունը:

Պատկանյանի աշխատավոր երիտասարդ հերոսն ասում է.

Մեր հույսն միայն մեր վըրա լինի,
Ջեն պետք մեզ նրպաստ մեծատուններին,
Ողորմությամբ թող մուրացիկն ապրի,
Մուրացողրն միշտ ստրուկ է օտարին:

Նալբանդյանը պատասխանում է.

Մեր հույսը սակայն մեր վըրա լինի,
Այսինքն ազդի մեր ընդհանրության.
Աղֆատ ու հարուստ տված քե քեի՝
Այսպես քե միայն կա նա՛ր փրկության:

Վերջին երկու քառյակների մեջ ևս, ի վերջո, մենք հակադրություն չենք տեսնում: Նալբանդյանը, որ այս դեպքում հարուստի և աղքատի միության կոչ է անում՝ դրա հնարավորության ամենից քիչ հավատացողներից էր:

Պարոդիան սակայն շարունակվում և վերջանում է Պատկանյանի դեմ ուղղված երգիծանքով: Նալբանդյանը երգիծում է Պատկանյանին ոչ թե արտասակայի հանդեպ, այլ պարզապես կասկած է հայտնում, թե կարո՞ղ է նա հետևողական լինել իր համոզմունքների մեջ, թե նա ընդունա՞կ է գործով ապացուցել իր խոսքի անկեղծությունը:

Նալբանդյանը գրում է.

Հարավ հյուսիսից փոշի բարձրացավ...
Շառաշուն դենքի... մթնեցավ օրը,
Ղաղաղ, սարբաղի գլուխն երևեցավ,
Մեր ազգասերը մտավ ծակուռը:

«Հը, Հայաստանը»-- թող տեղը կենա,—
Ասում է զգույշ մեր ազգասերը.
«Բահ ու հրացան, ի՞նչ եղան նոքա,
Թե՞ քշում էիր դու ուրջուններ...»:

Ես այդ ամենը անում եմ բերնով,
Կեցցե սուրբ Մեսրոպ, որ մեզ դիր տվեց.
Հողեր եմ վարում հեռուից՝ խոսքով.
Հրացանն իմ պեսը կուրծքին երբ սեղմեց...

Թվում է, թե բանասերը ոչ միայն չպետք է շեշտեր սկզբունքային իմաստով առանձին կարևորություն չներկայացնող այս փաստը, այլ անցներ այդ և նման մոմենտների կողքով և երկու հեղինակների փոխհարաբերությունը պարզելու համար առաջ բերեր դիտական-փաստական լուրջ և ծանրակշիռ հիմնավորումներ: Բայց քանի որ Ա. Հովհաննիսյանը այդքան կարևորություն է տալիս

այդ փաստին, ապա պարտավոր էր լուրջ դիտական վերլուծության ենթարկել երկու բանաստեղծությունները, ցույց տալու համար, թե ըստ էության ինչ են ներկայացնում դրանք: Նա այդ չի անում և աշխատում է ընդհանուր խոսքերի տարափի տակ սքողել ճշմարտությունը: Նա գրում է. «Ի սպաս դնելով ազգի հավաքական շահերին հայ գյուղացու մարտական կորովը՝ նա հակադրում է հայ գյուղացուն օտար ազգերին, առանց սրանց դասակարգային տարբերակման: Բանաստեղծի վերապատկերած հայ գյուղացու ատելին նրա դասակարգային թշնամին չէ, այլ նրա հայրենիքին տիրացած «ազգը», պարսիկը, թուրքը, «Հայկ և Լեոնին մոռանա՞նք» երգում հայ երիտասարդը հակադրված է «օտարոհոս» հայրենիքին, «սառը Հյուսիսին», Ռուսաստանին»¹:

Նախ, որն է այսպիսի հայտարարության իմաստը: Ինչու պետք է բանաստեղծի ազատագրական պայքարի հերոսը «իր հայրենիքին տիրացած ազգի» հանդեպ շտաժի միանգամայն օրինական թշնամանք:

Եվ ապա՝ գիտնական հայագետին հարկ կա հիշեցնել այն հանրահայտ փաստը, որ արևմտահայ գյուղացու «արտաքին թշնամին»՝ թուրք և քուրդ կալվածատերերը՝ միաժամանակ նրա «ներքին թշնամին էին»։ Նրանք էին, որ հայ գյուղացու ձեռքից նրա հողը «թիզ թիզ խլելով» ընշադրվում էին նրան: Արևմտահայ գյուղացիության այդպիսի վիճակն էր արտահայտում բանաստեղծը, երբ գրում էր.

Հայի՛ դուժան, հայի՛ դուժան, ո՞րի համար կջանաս,
Ո՞վ քեզիմով կտանջվի, որի՛ն գու կուշտ հաց կուտաս...

Եվ ապա՝

Արի՛ փշրեմ ես քու խոփը, տանք դարբընին կոելու,
Կրոնք-կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դեմ կովելու...

Եթե Ա. Հովհաննիսյանը մի փոքր ուշադիր կարդար «Հայկ և Լեոնին մոռանա՞նք» բանաստեղծությունը, ապա կտեսներ, որ Պատկանյանի հերոսը նույնքան էլ սուր ատելությամբ և վճռական պայքարի ոգով է լցված դեպի իր սևփական ազգի ներսում եղած ժողովրդի հարստահարիչները՝ ուրջոնները:

Բանասերը միանգամայն քմահաճ կերպով անտեսում է հանրահայտ փաստերը, որպեսզի ապացուցած լինի, որ պայքարի մեծ երդիչը լոկ խոսքի հերոս է, լոկ մի «գրական գաճաճ», ինչպես նա սիրում է ասել:

Հովհաննիսյանը գրում է. «Նախքան դյանը ծանակում էր ազգային այն գրողներին, որոնք հեռվից խոսքով հույեր էին վարում փախչելով իրական մարտերի վտանգներից, խուսափելով սրից ու հրացանից, նման այն Թովմաս էֆենդուն, որ գյուղական օղալում նստած՝ վճռում էր հայոց ազգի ապագան... Այդ կարգի խոսքի հերոսներին Նախքան դյանը գնում էր «գրական դաճաճների» շարքին»²:

Մեկ դարմացնում է, թե ինչո՞ւ Ա. Հովհաննիսյանը չի կամենում ընդունել, որ գրողի «խոսք» հենց նրա «գործն» է, ինչպես ասել է Թումանյանը: Ի՞նչ է նա հասկանում, երբ ասում է «փախչելով իրական մարտերի վտանգներից»: Այդ ո՞ր մարտադաշտն է լքել Պատկանյանը, որ Ա. Հովհաննիսյանի համար վատի համբավ է ձեռք բերել: Եվ ապա այդ ո՞ր օրվա՞

¹ Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., հատ. 2, էջ 108:

² Նույն տեղում, էջ 458:

նից է, որ մարտաշունչ երգերի հեղինակ Պատկանյանը դարձել է գեներալի և մարտից խուսափող երգիչ: Պատկանյանին մի ժամանակ մեղադրում էին օտար բռնակալությունների դեմ ժողովրդին գեներալի կոչելու, գեներալն ապավինած երգիչ լինելու համար: Այսօր այլ երգ է երգվում:

Նալբանդյանից բացի արևելահայ մեծ, անվանի գրողների մեջ մենք չունեցանք ուրիշները, որոնք բանտերում տառապել են և տառապներում կոնյակին իրենց մահկանացուն, թեև նրանցից շատերին (և այդ թվում ամենից շատը Պատկանյանին) բաժին ընկավ խիստ դժվարին՝ կյանք և ծանր հալածանք պարիզմի պայմաններում: Այդ իմաստով Նալբանդյանի կյանքը եղակիորեն ողբերգական էր և եզակիորեն հերոսական, որը և հանդիսանում է նրա փառքն ու նրա պատիվը: Բայց գա չի նշանակում, որ այդպիսի կյանք չունեցող մեր մյուս գրողները «գրական գոմարներ» էին, կամ «Թովմաս էֆենդիներ», ինչպես որ թույլ է տալիս ասել Ա. Հովհաննիսյանը:

Ջի կարելի մի անձնավորության կյանք, թեկուզ ամենահերոսական, ամենաօրինակելի և ուսանելի կյանք, դարձնել չափանիշ ու պարտադիր ամենքի համար և այդ օրինակին չհամապատասխանող ամեն մեկին անարգել՝ «գաճաճ», կամ «Թովմաս էֆենդի» անվանելով:

Որքանով տրամաբանական կլինեք, օրինակ, ուսա գրականության մեջ չափանիշ վերցնել բանտի ու տառանալիության դաժան բովից անցած Ջերնիշևսկուն և գաճաճ կամ լոկ խոսքի հերոս անվանել, ասենք, Նեկրասովին, մոռանալով, որ վերջինիս մշտի և վրեժի երգերը հենց նրա զարմն էին, մեծ ու հերոսական գործը: Սրանք տարրական խնդիրներ են, բայց մենք ստիպված ենք անդադարապես դրանց, որովհետև Ա. Հովհաննիսյանի մտքերն ու գաղափարները ընթերցողին ակամա մղում են այդպիսի հարցերի ոլորտը:

Գրողի քաղաքական նկարագրի խնդիրը սրանով մենք չենք անտեսում, սակայն մերժում ենք դոգման ու շաբլոնը: Պատկանյանը քաղաքացիական վառ նկարագրի տեր մեր հեղինակներից է: Հիշենք, թե տակավին անցյալ գարի հիսնական թվականների կեսերին ինչպիսի մանիֆեստով նա հանդես եկավ:

«Գամառ-Քաթիպան (խոսքը «Գամառ Քաթիպա» ընկերության «Տետրերի» մասին է—Հ. Մ.) անպատճառ պիտի ունենա ուղղություն ներքին պարունակությունյան կողմանե. նա պիտի լինի մեր օրերու սեփական, մեր կարծիքների և մեր նվիրական խորհուրդների արձագանքը. նորա կարողացողները թող չի գտնեն մեջո այնպիսի հատվածներ, որոնք կարող են պատճառ լինել հային անգործ կենցաղ սիրող լինել. թող չի անեն նորան կրոնասեր քրիստոնյա, գավակասեր կամ բնտանեսեր ծնող. այլ ամեն մի դորա մեջ պարունակած հողվածը թող կարողանա արժարժել նոցա սրտի մեջ, եթե ոչ ուղղակի կերպով հայրենասիրությունը, գոնե թող հիշեցնեն նոցա՝ նոցա կորցրած երջանկությունը: Թող (հայր) կամաց-կամաց սովորի պաղարյուն նայել այն մահվան վրա, որ նա կարող է ստանալ զոհելով անձը ազգի ազատությունը: Ուստի՝ մենք պիտի աշխատենք մոռանել Գամառ-Քաթիպայի մեջ վարք երևելի արանց՝ ինչպես որ էին Գուստավ Ադոլֆը, Վիլհելմ Թեյլը, Բոցարիսը, Դմիտրի Դոնսկոյը, Լեոնիդը և շատ ուրիշները, որոնք փառք են իրանց հայրենյաց: Ընդհակառակն, եթե մենք տեղավորենք այնպիսի շարադրություններ, որտեղ որ ապստամբությունը (ազդասիրական) համարվում է հանցանք, կսովորեցնենք հային խաղաղ առտնին կյանք վայելել՝ այն ժամանակ ինչի պիտի նմանին նոքա. ոչ ապաքեն այն ատելի հայերուն, որոնցով առատ են ներկա դարումս Մոսկով, Պետերբուրգ,

Ղզլար, Հաշտարխան: Իմ կարծիքով ավելի լավ է նկարագրել սպաստոմբ ավազակների կյանքը, զորքերինակ Պուղաչովի, Ստենկա-Ռազինի, Օտրեպկեի, քան թե գերմանական կյանքից առած, մեղր ու կարագով ծեփած և սերով կռված՝ Խոնեսաներու, Վոյդեմառներու և Դյուվալներու: Երգերս թող պարունակեն իրենց մեջ հուսահատություն, կասկածանք (սկեպտիցիզմ), կյանքից զզվումն՝ քան թե բնության և աստծու ողորմությունը, բարոյականության հաղթանակը: Թող հայ աղջիկը սիրե քաջությունը, քան թե բարոյական առաքինություն, սե և խոճուճիկ մսգեր, զգայուն հոգի, տուխտ (отрадный) աչքեր, քան թե փայլուն ուսագիրքներ, հարուստ կամ աստիճանավոր փեսա: Դիտեմ՝ մեզ է հայոցին, անբարոյական կոնվանեն, խեղացնոր կկարճեն, բայց մենք եթե ի հասնենք էլ մեր նպատակին, դոնե կմոտենանք, հնար չի կա, որ հետևողներ չունենանք»¹:

Որքա ն հետո է Ա. Հովհաննիսյանի պատկերած «պայքարից փախչող», «պահպանողական» Պատկանյանը այս տողերը գրող Պատկանյանից, այն զբոսից, որն իր սյուններով և բանաստեղծություններով առաջիններից մեկը ծառա եղավ միջնադարյան անշարժության դեմ, վանեց ժողովրդից միջնադարյան թմրությունը, ցնցեց հայի հոգու լարերը, սովորեցրեց նրան սիրել հայրենիքը, հավատով նայել հայրենիքի ապագային, անձնվիրաբար պայքարել հանուն այդ լուսավի ապագայի:

Վերը շարագրած նշանաբանի տակ ընթացավ Պատկանյանի 50—60-ական թվականների ստեղծագործական բուռն գործունեությունը: Իսկ 70—80-ական թվականներին Պատկանյանը ոչ միայն շնահանջեց իր գիրքերից, այլև ավելի սերտ մերձեցավ ժողովրդին, նրան հուզող խնդիրներին, ավելի խորը սոցիոլոգի աշխատավորական լայն խավերի վիճակով և ավելի անսքող ու համարձակ զրուստեց իր ատելությունն ու թշնամանքը շահագործող դասակարգերի նկատմամբ:

Պատկանյանի 70—80-ական թվականների կյանքը իր հայրենի քաղաքում շատ կողմերով հիշեցնում է աղա Խալիբյանի դեմ Նալբանդյանի մղած բուռն պայքարի փոթորկոտ ժամանակաշրջանը: Չկար Խալիբյանը, բայց նա թողել էր իր հոգևոր ժառանգներին, որոնց դեմ արիաբար կանգնեց Պատկանյանը, իր վրա վերցնելով քաղաքի և նոր-Նախիջևանի շրջակա գյուղերի շարատանջ աշխատավորության շահերի: պաշտպանության դժվարին, բայց աղնիվ ու հեղուսական գործը: Վերնախավերի դեմ ուղղված Պատկանյանի սպանիչ սատիբուսական գործերը՝ տրձակ թե չափածո՝ ստեղծվում էին հասարակական կրքոտ բախումների շիկացած մթնոլորտում: Աչքի առաջ ունենալով «աքսոր, հալա-հանք և մահ», Պատկանյանը անհաշտ պայքարի մարտահրավեր էր նետում Խախիջևանի աղա-վաճառականներին, ազդեցիկ հոգևորականությանը և կառավարական ապարատի ներկայացուցիչներին: «Մինաս Խալիբով, Միքայել Տեր-Գրիգորյան, Տեր Եղիա, Սերոբ Հարությունով, Գևորգ Խոճաև... կան մարդիկ, որոնք ձեզ այնպես կճանաչեն, ինչպես դուք եք իսկապես, և ոչ թե ինչպես որ կաշխատեք երեալ: Ձեր անունը վազը է, միշտ ծառավ անմեղ արյունի, ձեր կյանքը ազգին միշտ թանկ կնստի, դուք ազգի արյունով ապրող եք, դուք՝ միշտ հալածող և սպանող եք նորա հավատարիմ հովիվներին. ձեր դավաճանքին անձր և ձեր կորյուններուն ապրեցնելու համար պետք է ամբողջ քաղաքի և

¹ Ռ. Պատկանյան, Երկեր, Հայպետհրատ, 1955. էջ 740—741:

դավառի բնակչության արյուն քրտինքը. ով որ ձեր գործի, ձեր ստրուկը չէ՝ նա ձեր արյունալի զոհն է, ով չէ սիրում ձեզ, նորա ճակատի վրա գրած է աքսոր, հալածանք և մահ»:

Ա. Հովհաննիսյանին՝ Նալբանդյան-Պատկանյան փոխհարաբերության հարցում զբաղեցրել է լուկ խնդրի նեգատիվ կողմը, այնինչ Լթե նա այդ հարցը քննության առնելը բազմակողմանիորեն, կտեսներ, թե հիշյալ տասնամյակներին՝ այն շրջանում, երբ անպատիժ չէր կարելի անգամ հիշել մեծ նահատակի անունը, ինչպիսի խոր համակրանքով էր լցված Պատկանյանը նրա հիշատակի հանդեպ:

Նալբանդյանագետը անտեսում է խնդիրը բոլորովին նոր կողմից լուսաբանող Պատկանյանի երկու չափածո գործերը՝ «Նալբանդին զայրույթը» և Նոր-Նախիջևանի քաղաքային վարչության քարտուղար Սերոբ Հարությունյանի չարագործությունները մերկացնող ոտանավորը:

Այդ բանաստեղծություններում համերաշխելով աշխատավորության շահերի համար մարտնչող և հանուն այդ շահերի իր անձը զոհած Նալբանդյանի հետ, Պատկանյանը մեծ նահատակի ճակատագրի մեջ տեսնում է իր սփական ճակատագիրը, ինչպես նաև Նախիջևանի աղաների դեմ իր պայքարը դիտում որպես շարունակություն այն պայքարի, որ այնպիսի վճռականությունամբ մղում էր Նալբանդյանը ընդդեմ մեծահարուստ հալիրյանի:



Ա. Հովհաննիսյանը փորձում է բնութագրել նաև Պատկանյանի գրական ուղղությունը:

«Ռ. Պատկանյանն առաջին էր մեզանում, որ հռչակեց ու կենսագործեց ումանտիկական էսթետիկայի սկզբունքները»¹, — դրում է Ա. Հովհաննիսյանը: Խնդիրն այն չէ, որ «Չախուրի», «Փոռսուխին ավաղի», «Վայնայի», «Անգուն կտորի», «Քալական մեռելների» հեղինակ Պատկանյանը բանասերի կողմից անվերապա կերպով ումանտիկ է որակվում: Ոչ էլ մեզ զարմացնում է բանասերի սխալ պատկերացումը հայ գրականության մեջ ումանտիզմի սկզբնավորման մասին: Սակայն մեզ անկեղծորեն զարմացնում և վշտացնում է ումանտիկական ուղղության այն ըմբռնումը, որ հանդես է բերում Ա. Հովհաննիսյանը: Հայտնի է, որ գոհհիլ-սոցիոլոգները զրականության մեջ ումանտիկական ուղղությունը համադրելով փիլիսոփայական իդեալիզմի հետ՝ կյանքի ճանաչողության և օրյեկտիվ ճշմարտության բացահայտման տեսակետից հայտարարում էին այն մեթոդի և գրողին տրվող ումանտիկ որակումով արդեն իսկ որոշում էին նրա աշխարհայացքի ռեակցիոն ուղղությունը, լավագույն դեպքում՝ սահմանափակությունը: Այս դիրքերից է հենց Պատկանյանի գրական ուղղությունը բնութագրում Ա. Հովհաննիսյանը: Բանի որ Պատկանյանի ուղղությունը ումանտիզմն է, ապա, ուրևմն, նրան չէր կարող զբաղեցնել «առօրյա կյանքը, նրա տիպական իրողություններն ու դեմքերը»² — արամաբանում է բանասերը:

Պատկանյանի ազատագրական պայքարի երգերն էլ ըստ Ա. Հովհաննիսյանի ոչ թե հասարակական կյանքի օրյեկտիվ իրողությունների արձագանք-

¹ Ա. Հովհաննիսյան, *Երկ. աշխ.*, էջ 455:

² Նույն տեղում, էջ 456: